



ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ԵՊՀ նորարարության տնտեսագիտության ամբիոնի հայցորդ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախկինում գործող համակարգը, ամբողջովին սպառելով իրեն, որպես ժառանգություն թողել է ոչ մրցունակ տնտեսություն՝ իր ինստիտուտներով, կառուցվածքով, մարդկային և կառավարման ռեսուրսներով, հին պայմանավորվածություններով: Իշխանության հաջողությունը պայմանավորված է լինելու այն բանով, թե ինչ արդյունավետությամբ է նա կարողանալու իրականություն դարձնել իր իսկ հրապարակած և բարձրաձայնած սկզբունքները՝ նոր և ներառական, արդյունավետ և մրցունակ տնտեսություն, նոր ինստիտուտներ՝ խաղի նոր կանոններով, կառուցվածքով, հասարակական նոր համաձայնագրով, բովանդակությամբ և էությամբ նոր մասնակիցներով, պետություն-շուկա-մասնավոր ձեռնարկատիրության նոր հարաբերություններով: Նոր տնտեսական քաղաքականության բաղադրիչներից է տնտեսության կառուցվածքի փոփոխությունների իրականացումը: Իշխանությունը, որպեսզի հնարավորություն ունենա իրականություն դարձնել վերը նշված սկզբունքները, պետք է ձեռնամուխ լինի շատ պարզ, բայց միաժամանակ բարդ, ցավոտ միջոցառումների: Դրանցից մեկն էլ ուղղված պետք է լինի տնտեսության կառուցվածքի փոփոխությանը: Այդ խնդիրն է արժարժվում սույն ուսումնասիրության մեջ, և տնտեսության ՀՆԱ-ի վերլուծության միջոցով փորձ է արվում ներկայացնել տնտեսության ընդհանուր վիճակը, վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք, տարիների ընթացքում լուծում չստանալով, այսօր խոչընդոտում են կամ չեն նպաստում տնտեսության, երկրի առաջընթացին: Միաժամանակ տրվել են գնահատականներ տարբեր ժամանակահատվածներում ՀՆԱ-ի վրա առանձին գործոնների ազդեցության վերաբերյալ:

Հիմնաբառեր. ՀՆԱ, ինստիտուտներ, կառուցվածք, արդյունավետություն, եկամուտ, ծախս

JEL: O11, P44

Յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար օգտագործվող ռեսուրսների (արտադրական, բնական, մարդկային կապիտալի և արտաքին զուտ ակտիվների) ամբողջությունը, որն անհրաժեշտ է հասարակության նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման համար, հանդես է գալիս որպես համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ստեղծման գործընթաց: Ըստ որում, այդ ռեսուրսների մի մասն օգտագործվում է թողարկվող ապրանքների և ծառայությունների միջանկյալ սպառման համար, իսկ թողարկման և միջանկյալ սպառման տարբերությունը հանդես է գալիս որպես ավելացված արժեք, որը ներկայացնում է հասարակության մասշտաբով աշխատավարձի ֆունդը և շահույթը: Իսկ եթե ավելացված արժեքին գումարենք արտադրության հարկերը (հանած սուբսիդիաները), ապա կստանանք համախառն ներքին արդյունքի մեծությունը: ՀՆԱ-ն, որպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշ, առաջին հերթին բնորոշում է հասարակության տնտեսական ներուժը կամ, այլ կերպ ասած, ամեն երկրի տնտեսական հզորության խորհրդանիշն է:

Սակայն միշտ չէ, որ ՀՆԱ-ի դրական տեղաշարժը, որը նշանակում է ըստ էության նաև տնտեսության աճ, ամբողջովին է ներկայացնում իրական պատկերը: Տնտեսագիտական գրականության մեջ օրեցօր ավելի հաճախ են հանդիպում տեսակետներ, որոնք կասկածի տակ են դնում միայն ՀՆԱ-ով տնտեսական աճը, տնտեսության զարգացումը բնութագրելը: Այսպես, տնտեսական պատմության մեջ շատ դեպքերում տնտեսական աճն ուղեկցվել է անհավասարության աճով: Նմանօրինակ իրավիճակ է նկարագրվում *Ս. Կուզնեցի* կորի միջոցով: Սակայն հնարավոր են իրավիճակներ, երբ այդպիսի կորի գոյության պայմանները խախտվեն, և Կուզնեցի օրինաչափությունները չգործեն այս կամ այն սոցիալ-տնտեսական զարգացման միջակայքում¹: Մասնավորապես, Նոբելյան մրցանակակիր Ամարտի Սենի բերած տվյալները զարգացող երկրների մասին վկայում են, որ տնտեսության մեջ ստեղծված եկամտի հավասարաչափ բաշխումը ազդում է զարգացման սոցիալական արդյունքների վրա²: Տնտեսությունը կարող է ցույց տալ ազգային եկամտի աճի բարձր տեմպ և նմանատիպ աճ բնակչության մեկ շնչի հաշվով, սակայն ի հաշիվ նրա, որ այդ եկամուտը ծայրահեղ անհավասարաչափ է բաշխվում: Այս դեպքում մարդկանց բարեկեցության մակարդակն ավելի ցածր կլինի, քան բաշխումը հավասարաչափ կատարելիս: Սա ՀՆԱ-ի թերությունն է: Խնդիրն այնքան կարևորվեց, որ 2008 թ. փետրվարին Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին դիմեց Նոբելյան մրցանակակիրներ *ժոզեֆ Ստիգլիցին* և *Ամարտի Սենին*, ինչպես նաև ֆրանսիացի հռչակավոր տնտեսագետ *ժան-Պոլ Ֆիտուսին`* առաջարկելով ստեղծել առաջատար տնտեսագետներից բաղկացած հանձնաժողով, որպեսզի ուսումնասիրվի տնտեսական և սոցիալական առաջընթացի գնահատման համար ՀՆԱ-ի վստահելի ինդիկատոր լինելու հանգամանքը: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփվեցին և

¹ Տե՛ս *Сухарев О. С.*, Экономический рост, благосостояние и институциональные изменения, Журнал институциональных исследований, 2011, том 3 (номер 3), էջ 19-39:

² Տե՛ս *Сен А.*, Идея справедливости. М., изд-во Института Гайдара. Фонд «Либеральная Миссия», 2016. 520 с. ISBN 978-5-93255-457-9 (англ. The Idea of Justice, 2010):

Стиглиц Д., Сен А., Фитусси Ж.-П., Неверно оценивая нашу жизнь: Почему ВВП не имеет смысла? Доклад Комиссии по измерению эффективности экономики и социального прогресса = Mismeasuring our lives: why GDP doesn't add up / Пер. с англ. И. Кушнаревой; науч. ред. перевода Т. Дробышевская. М., изд-во Института Гайдара, 2015:

ներկայացվեցին գրքի տեսքով³: Հեղինակներն առաջարկեցին բազմակողմանիորեն դիտարկել ՀՆԱ-ի թերությունները որպես հասարակության բարեկեցության չափանիշ՝ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ բացի վերը նշվածից, ՀՆԱ-ն հաշվի չի առնում, օրինակ, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: ՀՆԱ-ի փոխարեն հեղինակներն առաջարկում են հասկացությունների մի ամբողջ սպեկտր՝ տնտեսական բարեկեցության կայուն ցուցանիշներից մինչև խնայողությունների, հարստության և «կանաչ ՀՆԱ-ի» չափում: Կարելի է շարունակել թվարկել հեղինակների և ներկայացնել այլ տեսակետներ, որոնք հիմնավորում են ՀՆԱ-ն փոխելու անհրաժեշտությունը, սակայն այսօր այն մնում է միակ ցուցանիշը, որը հնարավորություն է տալիս վերլուծություններ կատարել, համեմատել և պարզել ինչպես ներքին տնտեսական կյանքի խնդիրները, առավելությունները, անելիքները, այնպես էլ արտաքին խոչընդոտները, ռիսկերը և այլն: Այսինքն, կախված ուսումնասիրման ժամանակ ձևակերպված խնդրից, հարցադրումներից՝ ՀՆԱ-ից օգտվելու անհրաժեշտությունը տարիների ընթացքում չի պակասել, ավելին՝ ավելացել է: Մենք էլ մեր ուսումնասիրության ընթացքում նպատակ ենք դրել պարզել և գնահատել Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային փոփոխությունների կարևորությունը, որի մասին մանրամասնորեն և շատ անգամ խոսել են ՀՀ նոր իշխանության ներկայացուցիչները⁴ օգտվելով ՀՀ ՀՆԱ-ի վերաբերյալ տարբեր ժամանակներում, տարբեր չափման եղանակների կիրառմամբ ներկայացված վիճակագրական հրապարակումներից: Նպատակը իրավիճակի ամբողջական պատկերը ստանալն է, առավելությունների կամ թերությունների հայտնաբերումը, ըստ դրանց էլ փորձ է արվել առաջարկություններ ներկայացնել վիճակը բարելավելու ուղղությամբ:

Մեթոդաբանություն: Ուսումնասիրման համար առավել կարևորը հավաստի տվյալների հիման վրա, աշխատող և մեր կողմից փորձարկվող՝ թվային և վիճակագրական տվյալների օգտագործմամբ ՀՆԱ-ի կառուցվածքային փոփոխությունների ներկայացումն է և դրանց գնահատումը: Այն իրականացնելու համար ընտրված մեթոդաբանությունը ունի հետևյալ բաղկացուցիչները:

Աշխատանքի համար տեսական հիմք են հանդիսացել ՀՆԱ-ի, ՀՆԱ-ի հաշվարկման վերաբերյալ տնտեսագետների կողմից շրջանառության մեջ դրված հրապարակումները, հետազոտությունները, աշխատությունները, ինչպես նաև գիտագործնական նշանակություն ունեցող հիմնադրույթները:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել տարբեր մեթոդական հրապարակումները, ՀՀ Կառավարության, միջազգային կազմակերպությունների, տեղական առանձին գերատեսչությունների որոշումները, նորմատիվային փաստաթղթերը ու հայեցակարգերը, ռազմավարական և միջնաժամկետ ծրագրերը, ՀՀ ֆինանսների նա-

³ Տե՛ս **Стиглиц Д., Сен А., Фитусси Ж.-П.**, Неверно оценивая нашу жизнь: Почему ВВП не имеет смысла? Доклад Комиссии по измерению эффективности экономики и социального прогресса / пер. с англ. И. Кушнаревой; науч. ред. перевода Т. Дробышевская. М., изд-во Института Гайдара, 2015, 216 с:

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին» ՀՀ Կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշումը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019 թ. փետրվարի 14-ի ԱԺՌ-002-Ն որոշմամբ., «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին» ՀՀ Կառավարության 2018 թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշում, <http://www.gov.am/files/docs/2782.pdf>:

խարարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ կենտրոնական բանկի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, այլ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցները, հաշվետվություններն ու պաշտոնական վիճակագրությունը, ուղեցույցները, ինչպես նաև ընտրված թեմայի վերաբերյալ նախկինում կատարված ուսումնասիրությունները:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վիճակագրական, տնտեսաչափական, համեմատական խմբավորումների և վերլուծության ու ամփոփումների մեթոդները: Աշխատանքի արդյունավետությունն ու կիրառական նշանակությունը պայմանավորված են նախևառաջ սկզբնական տվյալների հավաստիությամբ, որն էլ իր հերթին՝ այն հանգամանքով, որ հաճախակի կամ առանձին դեպքերում պաշտոնական վիճակագրական և այլ տվյալները տարիներ շարունակ ներկայացվել են խեղաթյուրումներով, քաղաքական նպատակներին ծառայելու և ոչ թե իրական պատկերը ներկայացնելու տրամաբանությամբ, և դրա հետ կապված՝ հանրությունը, մարդիկ թե՛ երկրի ներսում, թե՛ դրսում ճշմարտությունը մինչ օրս չեն իմացել: Այս և փաստացի տվյալների բացակայության խնդիրը պետք է ժամանակի ընթացքում լուծվեն սոցիոլոգիական հարցումների, մասնագիտական քննարկումների, առանձին դեպքերում՝ միջազգային համադրումների արդյունքում:

Ընտրված մեթոդաբանությունը պայմանավորված է ուսումնասիրության հիմնական նպատակով, որի իրագործումը պահանջում է թավշյա հեղափոխության արդյունքում ձևավորված նոր կառավարության հրապարակած տնտեսական հեղափոխության անհրաժեշտության գաղափարի իրականացման հիմնավորումների շրջանակում ցույց տալ և հաշվարկել հատկապես կառուցվածքային փոփոխությունների կարևորությունը:


Քննարկման շրջանակում կարևոր է նաև ՀՆԱ-ի ձևավորման արդյունավետության գործընթացն ու դրա մակարդակը, որը կարելի է դիտարկել որպես ՀՆԱ-ի (որպես զարգացման տնտեսական արդյունքի) և դրա ստացման համար ծախսված, որպես կանոն մեկ տարվա կտրվածքով կատարված, թողարկման ծավալ (որպես կատարված ծախսերի մեծություն): Ըստ այդմ էլ ՀՆԱ-ի և թողարկման ծավալների մեծությունը կարելի է դիտարկել որպես երկրի մասշտաբով տնտեսական արդյունավետության ցուցանիշ: Եվ որքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան հաջողված և արդյունավետ կարելի է համարել ՀՆԱ-ի ստեղծման գործընթացը: Մյուս կողմից, ՀՆԱ-ն, բացի ավելացված արժեքից, ներառում է նաև արտադրության հարկերը (հանած սուբսիդիաները)՝ դրանով իսկ բնորոշելով նոր ստեղծված արդյունքի մեջ պետությանը բաժին ընկած արժեքի մեծությունը: ՀՀ արտադրության հաշիվը՝ ըստ թողարկման, միջանկյալ սպառման, ՀՆԱ-ի, այդ թվում՝ ավելացված արժեքի և արտադրանքի հարկերի (հանած սուբսիդիաները) և դրանց կառուցվածքի, վիճակագրական հրապարակումների համաձայն՝ ցույց է տալիս, որ 1997-2017 թթ. ընթացքում ՀՀ-ում ՀՆԱ-ի թողարկման ծավալների ավելացմանը զուգընթաց բարձրացել է դրա ստեղծման արդյունավետությունը: Այսպես, եթե 1997 թ. ՀՆԱ-ի մեծությունը թողարկման մեջ կազմել է 57.8%, ապա 2017 թ.՝ 70.4%, իսկ արտադրանքի հարկերի (հանած սուբսիդիաները) հարաբերակցությունը թողարկման ծավալին փոփոխվել է՝ համապատասխանաբար 4.6%-ից հասնելով 7.2%-ի:

Ինչպես հայտնի է, ՀՆԱ-ն, որպես երկրի տնտեսության բոլոր ոլորտներում ստեղծված ավելացված արժեքների հանրագումար, միևնույն ժամանակ

նան դրանց ստեղծմանը մասնակցող ինստիտուցիոնալ հատվածների եկամուտների ամբողջությունն է: Այդ տեսանկյունից տնտեսությունում կատարվող փոփոխությունների կարևոր բնութագրիչներ են ՀՆԱ-ի ստեղծմանը մասնակցած այդ հատվածների միջև եկամտի բաշխման հարաբերակցությունը և դրա շարժը:

Գծանկար 1-ում ներկայացված է ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի, 1990-2008 թթ. (մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա ընդգծված դրսևորվեց 2009 թ.) ՀՆԱ-ի կառուցվածքի շարժը ըստ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության, արտադրության և ներմուծման զուտ հարկերի, համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների: ՀՆԱ-ի եկամտային այդպիսի կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, թե երկրում ստեղծված ավելացված արժեքը կամ սկզբնական եկամուտները ինչ հարաբերակցությամբ են բաժանվում դրանց ստեղծմանը մասնակցած վարձու աշխատողների, պետության և գործարարների միջև:

Գծանկար 1-ում բերված տվյալներն ու դրանց շարժը ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի կառուցվածքում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինն էականորեն կրճատվել է՝ 57.4%-ից հասնելով 37.2%-ի, նվազելով ավելի քան 20 տոկոսային կետով: Փոխարենը նույն չափով ավելացել է տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ հասնելով 50%-ի: Սա նշանակում է, որ նոր ստեղծված եկամտի կեսը բաժին է հասնում գործարարներին, կամ այս դեպքում տեղին է ասել՝ ձեռնարկատերերին, և միայն 1/3-ից փոքր-ինչ ավելին՝ վարձու աշխատողներին:



Գծանկար 1. ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի 1990-2008 թթ.⁵

Պետության մասնաբաժինը՝ արտադրության և ներմուծման զուտ հարկերի տեսքով, կազմում է ընդամենը 12.8%, որը շուրջ երկու տոկոսային կետով բարձր է 1990 թ. մակարդակից: Ստացվում է, որ արտադրության և ներ-

⁵ Աղբյուրը՝ համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերը («Ազգային հաշիվների համակարգ» բաժին), (www.armstat.am):

մուծման նկատմամբ կիրառվող անուղղակի հարկային եկամուտները կազմում են ավելացված արժեքի ընդամենը 12.8%-ը, այն դեպքում, երբ ԱԱՀ դրույքաչափը շատ ավելի բարձր է: Սա կարելի է համարել անուղղակի հարկերի և մասնավորապես՝ ԱԱՀ կիրառման անարդյունավետության և տնտեսությունում մեծ ծավալի ստվերայնության առկայության վկայություն: Հարկ է նկատել, որ զարգացած տնտեսությամբ երկրներում գործում է «սուրբ երրորդության» մոտեցումը, երբ վարձու աշխատողների, պետության և ձեռնարկատերերի մասնաբաժինը ստեղծված ավելացված արժեքում զրեթե հավասար է, այսինքն՝ վերը դիտարկվող ինստիտուցիոնալ հատվածներից յուրաքանչյուրի մասնաբաժինը գտնվում է 1/3-ի շրջակայքում: Այս առումով պետք է արձանագրել, որ վերջին երկու տասնամյակի ընթացքում ՀՀ-ում տեղի է ունեցել եկամտի ձևավորման կառուցվածքային անհամամասնությունների խորացում՝ ի վնաս վարձու աշխատողների և հոգուտ ձեռնարկատերերի:

Աղյուսակ 1

ՀՀ սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը 1997-2016 թթ.


Ցուցանիշները	1997	1999	2008	2009	2010	2012	2014	2016
1. Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	336.1 41.7	423.7 42.7	1328.4 34.3	1207.7 35.5	1284.4 33.6	1471.4 30.7	1629.6 30.6	1763.1 32.2
2. Տնտեսության համախառն շահույթ և համախառն եկամուտներ	396.8 49.2	461.6 46.5	1784.8 46.1	1550.7 45.6	1734.4 45.4	2264.7 47.2	2584.6 48.5	2735.2 49.9
3. Արտադրության և ներմուծման հարկեր	74.3 9.2	116.1 11.7	463.3 12.0	386.3 11.4	444.1 11.6	534.3 11.1	620.4 11.6	578.7 10.6
4. Արտադրության և ներմուծման սուբսիդիաներ (-)	2.9 0.4	14 1.4	8.3 0.2	3 0.1	2.7 0.1	3.9 0.1	6 0.1	9.7 0.2
5. Սկզբնական եկամուտներ՝ ստացված «արտերկրից»	2.1 0.3	5.0 0.5	304.3 7.9	259.8 7.6	358.6 9.4	531.8 11.1	504.5 9.5	408.9 7.5
6. Ընդամենը	806.4 100.0	992.4 100.0	3872.5 100.0	3401.5 100.0	3818.8 100.0	4798.3 100.0	5333.1 100.0	5476.2 100.0

Համարիչում՝ ընթացիկ գներով, մլրդ դրամ, հայտարարում՝ %-ով ընդամենի նկատմամբ: Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, Եր., ՀՀ ՎԿ, 2018, էջ 235, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 226-227, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 230-231, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 230-231, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 205-206:

Աղյուսակ 1-ում բերված է ՀՀ սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը 1997-2016 թթ.:

Տնտեսության վերարտադրողական ունակությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե տնտեսությունում ստեղծված ձեռնարկատիրական շահույթի որ մասն է վերաներդրվում տնտեսական գործունեության մեջ կամ էլ՝ ինչ չափով է իրականացվում արտադրական հզորությունների նորացում կամ արդիականացում: Այս առումով ուշագրավ կարող է լինել տնտեսության համախառն շահույթի և խառը եկամուտների կառուցվածքի դիտարկումը: Այս ցուցանիշն ունի երկու առանցքային բաղկացուցիչ՝ հիմնական կապիտալի սպառում և տնտեսության զուտ շահույթ, զուտ խառը եկամուտներ: Տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամտի կառուցվածքում հիմնական կապիտալի սպառման մասնաբաժնի շարժընթացը 1990-2016 թթ. ներկայացված է գծանկար 2-ում: Դիտարկվող ցուցանիշը, 1990 թվականից սկսած, կտրուկ անկում է ունեցել ընդհուպ մին-

չև 1995 թ.՝ այդ ընթացքում 46,9%-ից հասնելով 25,7%-ի: 1995 թվականից սկսած՝ որոշակի կայունացում և աճ է նկատվել մինչև 2000 թ., երբ այս հարաբերակցությունը հասավ 31,2%-ի, որից հետո նորից նվազման միտումները սկսեցին գերակայել ընդհուպ մինչև դիտարկվող ժամանակահատվածի վերջը, ինչի արդյունքում ցուցանիշը 2008 թ. հասավ 21,0%-ի սահմանին: Հաջորդ տարիներին այն սկսեց ավելանալ՝ 2016 թ. հասնելով 25,8%-ի: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսությունում կապիտալատար ճյուղերի մասնաբաժինը նվազում էր մինչև 2008 թ., իսկ հետագա տարիներին այն ունեցել է աճման միտում: Բացի դրանից, ձեռնարկատերերը տարեցտարի նախընտրում են կամ ստացված շահույթը հանել տնտեսական գործունեությունից, կամ էլ այն վերաներդնել հատույցի փոքր ժամկետով և կապիտալատարության ցածր աստիճանով գործունեության ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ, առևտուրը կամ հանրային սնունդը:




Չճանկար 2. Հիմնական կապիտալի սպառման մասնաբաժինը համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների կառուցվածքում, տոկոսներով⁶

Երկրի տնտեսությունում ձևավորված կառուցվածքային համամասնությունների վերլուծության կարևոր ուղղություններից է ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքի դիտարկումը: Այդ կառուցվածքի հիմնական բաղկացուցիչներն են վերջնական սպառմանն ուղղված ծախսերը, համախառն կուտակումը և ապրանքների ու ծառայությունների զուտ արտահանումը: Տվյալների վերլուծությունից հետևում է, որ ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառմանն ուղղված ծախսերը 1990-1995 թթ. աճել են՝ 66.3%-ից հասնելով 117.4%-ի, ինչը նշանակում է սպառման ծավալների աճ՝ նախկինում կուտակված խնայողությունների հաշվին: 1996 թվականից սկսած՝ իրավիճակն այս մասով որոշակիորեն շտկվել է, սակայն դեռևս հեռու է բավարար համարվելուց, քանի որ երկրում ստեղծված եկամտի 80%-ից ավելիի սպառումը նշանակում է տնտեսության վերարտադրողական հնարավորությունների շատ ցածր մակարդակի առկայություն: Խիստ մտահոգիչ է նաև ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման ցուցանիշի խրոնիկական դար-

⁶ Աղբյուրը՝ հաշվարկվել է համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի («Ազգային հաշիվների համակարգ» բաժին), (www.armstat.am) տվյալների հիման վրա:

ծած բացասական մեծությունը, որը թեև վերջին տարիներին, 1994-1998 թթ. համեմատ, ունեցել է անկման միտում, սակայն շարունակում է մնալ բարձր⁷:

Համախառն կուտակման մասնաբաժինը, որը բնութագրում է երկրի վերարտադրողական ներուժը, ՀՆԱ-ում 1992 թ. հասնելով գրեթե զրոյական մակարդակի, հետագա 1-2 տարիների ընթացքում նույն տեմպերով վերականգնվեց, իսկ 1999-2008 թթ. ժամանակահատվածում կայուն աճի տեմպեր արձանագրելով՝ դիտարկվող ժամանակահատվածի վերջում անցավ 40%-ի սահմանագիծը՝ այդ կերպ հավասարվելով 1991 թ. մակարդակին: Ըստ որում, գրեթե համանման շարժընթաց է դրսևորել նաև համախառն խնայողությունների մասնաբաժինը համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում՝ 1990-2016 թթ. համար (տես գծանկար 3): Խնդրի կարևորությունն ընդգծելու համար նշենք, որ զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներում ակտիվ կառուցվածքային վերափոխումների ժամանակաշրջանում արձանագրվել է խնայողությունների խիստ բարձր մակարդակ (միջինում 40%)⁸:



Գծանկար 3. Համախառն խնայողության տեսակարար կշիռը համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում, տոկոսներով⁹

Ինչպես արդեն նշել ենք, դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում ևս լուրջ վայրկյաններ է գրանցել և խիստ մտահոգիչ է: Այսպես, 1997 թ. հասնելով իր նվազագույն մակարդակին՝ -38,0%, ցուցանիշը հետագա մի քանի տարիների ընթացքում աստիճանաբար բարելավվեց՝ 2005 թ. հասնելով -14,4%-ի, իսկ 2018 թ.՝ -15,4%-ի:

Եզրակացություն: Մեր կատարած մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած երկու տասնամյակների ընթացքում ՀՀ տնտեսությունում արձանագրվել են ակտիվ կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում.

- ՀՆԱ-ի կառուցվածքում էականորեն կրճատվել է արդյունաբերության մասնաբաժինը և ավելացել է շինարարության ու ծառայությունների տեսակարար կշիռը,

⁷ Տես Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2004-2018 թթ., ՀՀ ԱՎԾ, Եր., ՀՀ ՎԿ:

⁸ Տես www.worldbank.org (World Development Indicators):

⁹ Աղբյուրը՝ համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերը («Ազգային հաշիվների համակարգ» բաժին), (www.armstat.am):

- արդյունաբերության կառուցվածքում կրճատվել է մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը և ավելացել է էներգետիկայի մասնաբաժինը,
- մշակող արդյունաբերության կառուցվածքում էականորեն նվազել է մեքենաշինության մասնաբաժինը և ավելացել է սննդի արդյունաբերության կշիռը,
- համախառն թողարկման կառուցվածքում ավելացել է ՀՆԱ-ի կամ համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը,
- ՀՆԱ-ի կառուցվածքում նվազել է վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության մասնաբաժինը՝ ի հակադրություն համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների մասնաբաժնի աճի,
- համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների կառուցվածքում էականորեն նվազել է հիմնական կապիտալի սպառման մասնաբաժինը,
- ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքում, 1990 թ. համեմատությամբ, աճել է վերջնական սպառման տեսակարար կշիռը և նվազել համախառն կուտակման կշիռը,
- ՀՆԱ-ի կառուցվածքում արտահանման տեսակարար կշիռը դիտարկվող ժամանակահատվածում էականորեն նվազել է, ինչի արդյունքում ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման բացասական հաշվեկշռի հարաբերական մեծությունն աճել է,
- արտահանման կառուցվածքում բարձրտեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների մասնաբաժինը նվազել է (վերջին տարիների ընթացքում այս ցուցանիշը չի գերազանցել 2%-ի սահմանագիծը, իսկ 2017 թ. տվյալներով տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանման մասնաբաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ կազմել է 0.19% (Հայաստանն այս ցուցանիշով զբաղեցնում է 87-րդ տեղը 119 երկրների շարքում¹⁰)),
- համախառն տնօրինվող եկամտի կառուցվածքում համախառն խնայողությունների մասնաբաժինը թեև վերջին տարիների ընթացքում անշեղորեն աճել է, սակայն դեռևս ցածր է 1990 թ., ինչպես նաև միջազգային փորձի արդյունքների հիման վրա դուրս բերված և առավել ընդունելի համարվող միջին մակարդակից:

Վերջին շուրջ երկու տասնամյակների ընթացքում կառուցվածքային տեղաշարժերի օբյեկտիվ և տրամաբանական բնույթը դեռևս չի նշանակում, որ այդ տեղաշարժերը ցանկալի են և օպտիմալ՝ հասարակության, պետության և երկրի երկարաժամկետ նպատակների իրագործման տեսանկյունից: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ տնտեսության նոր կառուցվածքի ձևավորումը և գործարկումը որպես կանոն տեղի է ունենում ցածր տեխնոլոգիական հենքի վրա, որը բավականաչափ հեռու է զարգացած երկրներում առկա մակարդակից, ինչը ՀՀ տնտեսության ներկայիս մրցակցային առավելությունները դարձնում է ոչ վստահելի և ժամանակավոր: Բացի դրանից, արտահանման կառուցվածքը, որում էական մասնաբաժին ունի հանքահումքային արտադրանքը, խիստ խոցելի է՝ միջազգային հումքային շուկաներում իրավի-

¹⁰ Արտահանման կառուցվածքում բարձր տեխնոլոգիական ապրանքների ամենամեծ մասնաբաժինն ունեն Հոնկոնգը (51.67%), Ֆիլիպինները (35.87%) և Սինգապուրը (32.02%): Աղբյուրը՝ https://www.theglobaleconomy.com/rankings/Information_technology_exports/:

ճակի տատանումների հետ կապված: Տնտեսության կառուցվածքի ոչ արդյունավետ բնույթը դրսևորվում է նրանով, որ վերջին տարիներին առաջանցիկ տեմպերով զարգացում են ապրել տնտեսության այն ճյուղերը, որոնք որակյալ աշխատուժի նկատմամբ մեծ պահանջարկ ներկայացնել չեն կարող, հետևաբար տեղի է ունենում աշխատուժի կառուցվածքային փոփոխություն՝ դրա որակական հատկանիշների վատացման ուղղությամբ:

Վերը նշվածի հետ միասին, տնտեսությունում առկա են ոլորտներ և գործունեության տեսակներ, որոնք ներկայում թեև արագ տեմպերով չեն զարգանում, սակայն համաշխարհային շուկայում կարող են ակտիվ մրցակցության մեջ մտնել: Մասնավորապես, այդ ասպարեզներում մրցակցային առավելություն է թերբեռնված տեխնոլոգիական հզորությունների, որակյալ կադրային ներուժի, հեռանկարային գիտատեխնիկական մշակումների առկայությունը:

Առաջարկություններ: Վերը ներկայացվածի համատեքստում չափազանց կարևոր նշանակություն է ստանում տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորմանն ուղղված համապատասխան պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, որի առանցքում պետք է լինի տնտեսության կառուցվածքային գերակայությունների հստակեցումը և նպատակաուղղված կենսագործումը, տնտեսության մրցունակության բարձրացումը:

Այս տեսանկյունից հանրապետության տնտեսության կառուցվածքային քաղաքականության հիմնական նպատակը պետք է հանդիսանա ներքին և համաշխարհային շուկաներում հայրենական ապրանքների և ծառայությունների մրցունակության բարձրացմանն աջակցությունը, վերամշակման բարձր աստիճանով արտադրանք թողարկող ճյուղերի, ինչպես նաև ծառայությունների ոլորտի ճյուղերի մասնաբաժնի ավելացման ուղղությամբ տնտեսական քաղաքականության ապահովումը:

Այս նպատակի իրականացման գործնական հնարավորությունները սերտորեն կապված են տնտեսության ներսում տեղաշարժերի օպտիմալ ռազմավարության որոշման, ինչպես նաև այն գործիքների և մեխանիզմների հետ, որոնք պետությունը պետք է կիրառի արդյունավետ տնտեսական քաղաքականության իրագործման ընթացքում, երբ զգալիորեն կավելանան արտահանման ծավալները, կմեծանա բնակչության զբաղվածության մակարդակը, որն էլ կնպաստի եկամուտների ավելացմանը ու կենսամակարդակի բարձրացմանը:

Օգտագործված գրականություն

1. «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին» ՀՀ Կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշում, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019 թ. փետրվարի 14-ի ԱժՌ-002-Ն որոշմամբ, «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին» ՀՀ Կառավարության 2018 թ. հունիսի 1-ի N 581-Ա որոշում, <http://www.gov.am/files/docs/2782.pdf>:
2. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2004-2018 թթ., ՀՀ ԱՎԾ, Եր., ՀՀ ՎԿ:
3. Сухарев О.С., Экономический рост, благосостояние и институциональные изменения. Журнал институциональных исследований, 2011, том 3 (номер 3).

4. Сен А., Идея справедливости. М., изд-во Института Гайдара. Фонд «Либеральная Миссия», 2016. ISBN 978-5-93255-457-9 (англ. The Idea of Justice, 2010).
5. Стиглиц Д., Сен А., Фитусси Ж.-П., Неверно оценивая нашу жизнь: Почему ВВП не имеет смысла? Доклад Комиссии по измерению эффективности экономики и социального прогресса / пер. с англ. И. Кушнareвой, науч. ред. перевода Т. Дробышевская. М., изд-во Института Гайдара, 2015.
6. www.worldbank.org (World Development Indicators):

ՎԱԱԳՆ ԽԱՇԱՏՄՐՅԱՆ*Исследователь кафедры инноваций ЕГУ****Структурные изменения в экономике РА и их***

оценка.– Ранее функционировавшая система, полностью исчерпав себя, оставила в наследство неконкурентную экономику с ее институтами, структурой, человеческими и управленческими ресурсами, старыми договоренностями. Успех правительства будет зависеть от того, насколько эффективно оно сможет реализовать обнародованные и озвученные принципы: новая инклюзивная экономика, новые институты, эффективная и конкурентоспособная экономика с новыми правилами игры, структурой, новым общественным договором – с ее новым содержанием и участниками, с новыми отношениями между государством, рыночными структурами и частным предпринимательством. Одним из компонентов новой экономической политики является осуществление изменений в структуре экономики. Для того чтобы власти смогли воплотить в жизнь вышеуказанные принципы, необходимы очень простые, но в то же время сложные и болезненные меры. Одна из этих мер должна быть направлена на изменение структуры экономики. Эта проблема стала предметом нашего исследования, где, с одной стороны, с помощью анализа ВВП предпринята попытка представить общее состояние экономики, а с другой стороны - выявить те проблемы, которые не решались годами и сегодня препятствуют прогрессу экономики страны. В то же время дана оценка воздействия различных факторов на величину и динамику ВВП в разные промежутки времени.

Ключевые слова: *ВВП, институты, структура, эффективность, доходы, расходы.*

JEL: O11, P44

ՎԱՈՒԳՆ ԽՈՇԱՏՄՐՅԱՆ*Resercher at the Chair of Innovation at YSU****Structural Changes in the Economy of the RA and Their***

Assessment.– The previously functioning system, having completely exhausted itself, left a non-competitive economy with its institutions, structure, human and managerial resources, and old agreements. The success of the government will depend on how effectively it can implement the principles announced and publicized: a new inclusive economy, new institutions, an efficient and competitive economy with new rules of the game, structure, new social contract - with its new content and participants, with new relations between

government, market structures and private entrepreneurship. One of the components of the new economic policy is the implementation of changes in the structure of the economy. In order for the authorities to be able to implement the above principles, very simple, but at the same time complex and painful measures are needed. One of these measures should be aimed at changing the structure of the economy. This problem has become the subject of our study, where, on the one hand, an analysis of GDP has been attempted to present the general state of the economy, and on the other hand, to identify those problems that have not been solved for years and today hinder the progress of the country's economy. At the same time, the impact of various factors on the magnitude and dynamics of GDP at different time intervals is estimated.

Key words: *GDP, institutions, structure, efficiency, income, expenditure.*

JEL: O11, P44